Աննա Դավթյան

Աշուն. լիճը: Ձմեռ. քարերը

Նա պարզապես նստեց,

Մեքենան դրեց P,

Ու ես երկար նայեցի նրա աչքերի մեջ,

Հետո նրա ուսի վրայով նայում էի լճին:

Լիճն աստղիկներով կծմծում էր մութը:

Հին գիշեր:

Նա ասաց՝ ճանապարհի համար կապիր մազերդ:

Երկու ափերը լճի, որում ոչինչ չի արտացոլվում:

Ողորմելի հատակը՝ ջրերի դեղնած փորի տակ:

Ես շարունակության համար ի՞նչ ունեմ տալու:

Ուշ աշնան սպիտակ եղանակ: Նա ասաց՝ Ան, բռնվիր ինձնից,

որ ձմեռը փուլ չգա ծառերի միջով: Արեւից մաշված ձյուներով ճկվելու են ծառերը:

Ժամերն ընկնում են սառած լիճը՝ գիշերվա երկայնքով:

Տարիների հավաքած երազ մը:

Ի՞նչ գործածել այս ամենի համար.

Սե՞ր: Մի՞թե:

Տես, բայց,

Ձեռքերս ու թեւերս

Պառկած են պարապ:

Ձյունը կուլ է գնում լճին:

Մութը դաղում է լիճը:

Ձմեռ. քարերը

Ծառերի արանքից հանդարտ իջնում է ձյան բացակայությունը,

Ու նրանք կանգնում են մերկ՝ հսկելով ճանապարհը:

Մի միտք է խոսում անընդհատ՝

Ինչպե՞ս անվանել եղածը,

Սե՞ր, մի՞թե:

Բառ, որը չես թողնում արտաբերել,

Բայց ես ասում եմ՝ ցավ:

Հետո քաղաքի տեսարաններ,

Սեւ քարով քաղաքի՝

Ավելի սեւացած անձրեւից:

Ճանապարհին՝ եղեգների փոքրիկ երամ՝

խունացած արեւի փոշուց:

Հեռվում թեւում է սեւամած կամրջի թոչունը

Անլույս հորիզոնի վրա: Մի ձեռք է հատում դանդաղ

մարմնիս ու մարմնիդ կարը:

Ձյունը վեր է ելել այնտեղ,

Որտեղից աստղերը ցած են թափում իրենց մարմինը:

Տարածությունն հսկա զբաղմունք է,

Երբ նայում եմ կասկածանքի միջից՝ հասկանու՞մ է, թե՞ չէ:

Քաղաքը շնչում է սեւ ածխաքարը ձմռան

Ու հակում է սալարկած փողոցներին իր բազալտե երեսը:

Քո դեմքը դուրս է լողում թացության մեջ,

Եղածն ավելի է թեթեւ, քան մառախուղը:

Այստեղ կան դաշտեր, որտեղ պառկած են մերկ քարեր,

Ու պառկած քարերն իմ սերն են քո հանդեպ,

Լերկ տարածությունն իմ սերն է քո հանդեպ:

Դիմացից գնում է ծոպավոր ճանապարհը,

Ցանկալիի զգացումը՝ ճանապարհի խճին ու ասֆալտին:

Գյուղեր ամեն կողմ՝

Երկնքի բաց երախի տակ, որ սպառնում է ձյուն ցած թափել,

Փոխարենն ուղարկում է համրություն:

Համր եմ, իմ սեր,

Չգիտեմ՝ քեզ ինչպես ասել բանը,

Որ քեզանից է գալիս:

Ձայնս ընկնում է գիշերվա մեջ, որ լուսնի բակին է պատկանում:

Մեքենան գնում է մետաքսե ակներով,

միտք քո մասին,

Քո կողմն եմ նայում լեռան քարերի վրայով,

Որտեղից փչում է շունչը ջրոտ հորիզոնի:

Գաղտնիք չէ:

Հորիզոնը գույն է՝

Քսված ամպերի պարանոցին:

Դատարկ փողոց.

ամբողջ երկայնքով քո անունն եմ ասում:

Ես խոսում եմ աչքերիդ, ձեռքերիդ կարոտից,

Փափուկ շորերիցդ,

Դու ժպտում ես հավանաբար լայն աչքերով՝

Պատասխանը դնելով ափիս մեջ:

Քեզ սիրելն այս գիշեր:

Շտապիր:

Ես ձեռքով եմ անում հրաժեշտին,

Ես ձեւացնում եմ, թե մեկն եմ, ով աշխարհին հանգիստ է նայում:

Սերը ապակյա պատշգամբ է,

Հենված խարխուլ տան կրծքին, որից քարեր են թափվում:

Ջուրը դաղում է ծառերի ոտքերը:

Քամին երեւում է ջրի միջով:

Անհատակ վիհը սիրո՝ ոտքերիս տակ է:

Լարերն ու էլեկտրասյուները ֆշշացնում են՝

Չի սիրում, չի սիրում, չի սիրում:

Իսկ դու կարող ես տեսնել սերը կողքից, արագի մեջ,

Ես հապաղելով եմ խոսում:

Հեռվից երեւում են քաղաքի սեւ տները՝

քարե գորգ,

Դրված մարդկանց ազատության վրա՝ ինչպես դարբնած բաղեղ:

Լիճը կայծկլտում է անձյուն ծառերի հետեւում:

Հնար գտեք խոսելու, ասում է: Կա:

Քաղաքի մեջ վնգում են մեքենաները՝

վազելով իրենց լույսի հետեւից՝ հողե ճամփաներով:

Գյումրի՝ իմ սիրեցյալ:

Ժամանակն իջնում է երկնքից՝ ձյան փոխարեն,

Բոլոր ժամացույցների միջով աննկատ սահում է սերը:

Ճշմարտությունը գալիս է երկու կողմից.

Մեկը՝ ինձնից,

Մյուսը՝ քեզնից,

Չգիտեմ, որտեղ են նրանք հանդիպելու:

Քաղաքի երեսին նախշեր,

Քաղաքի խորքում սիրո տարփանք,

Ես տրոփելով եմ գալիս քեզ մոտ:

Քանի որ երբ մեկն այդքան հեռանում է դեպի իր երազը,

Վերադարձը դառնում է դժվար:

Լուսնից կախված է միայնակ ծառը:

Պետք չէ ասել,

Բայց շատ ճնշված սեռ կա այստեղ,

Շաղը քարի տակ է:

Ինձ հանում է հունից:

Երեխեաներ են նստած իմ առջեւ,

Ում համար ես միգուցե աղոթում եմ:

Սիրտը շարունակում է ցատկել մի վայրկյանից դեպի մյուսը,

Երկնքով ծիծեռնակներ են անցնում,

Բայց, չգիտես ինչու, փետրվար է:

Տունը

Այստեղ մարդիկ են ապրել,

Ամենուր լսվում են նրանց ոտնաձայները,

Անգլուխ մի կին է նայում պատուհանի երկար փեղկից այնկողմ:

Իմ սենյակի չորրորդ պատուհանը հաղորդագրություն է՝

Շատ երկար է իմ գալը քեզ մոտ:

Սպիտակ պատեր՝ շշուկների արանքում, ու դռներ:

Դրսում մեքենաների տակ սպառվում է ձմեռը՝ առանց ձյան:

Խոհանոցում մրջյունների բույնն է,

Որ ներս են կրում դրսի չորացած ծառը:

Սպիտակ տուն՝ առանց թերությունների:

Բակից լսվում է խճի արծաթե ձայնը:

Դու չես:

Քամին քշում է տունը դեպի չերեւացող լիճը:

Գյումրի, 2018